«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱԴԵՄԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2024-2029 ԹԹ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՆԱԽԱԲԱՆ

«ՀՀ Լոռու մարզի Դաշտադեմի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ դպրոց կամ ուսումնական հաստատություն) զարգացման ծրագիրը կազմելիս առաջնորդվել եմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի 35-Ն հրամանի պահանջներով:

Դպրոցը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Դաշտադեմ գյուղում, որի հեռավորությունը Տաշիր քաղաքից 8 կմ է: Մինչև 1989 թվականը գյուղը բնակեցված է եղել ադրբեջանցիներով, իսկ դրանից հետո արդեն փոփոխվել է բնակչության կազմը, որը, սակայն, տարիների ընթացքում արձանագրել է նվազման միտում, և ներկայումս բնակչությունը կազմում է մինչև 100 բնակիչ:Գյուղում դպրոցը գործում է 1930-ական թվականներից: Համայնքի կապը հարակից գյուղերի հետ դաշտամիջյան է:

2003 թվականի հունվարի 29-ից դպրոցը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է որպես «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դաշտադեմի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն, գրանցման համարը՝ **69.210.00206,** իսկ իր գործունեությունը ծավալում է ՀՀ Լոռու մարզի Դաշտադեմ գյուղի 7-րդ փողոց, 10-րդ շենք հասցեում:

Հանրակրթական ծրագրեր իրականացնելու համար դպրոցին 2011 թվականի դեկտեմբերի 5-ին տրվել է համապատասխան լիցենզիաներ՝ տարրական Ա 0757՝ 46 սահմանային տեղ, հիմնական Ա 0746՝ 75 սահմանային տեղ, միջնակարգ Ա 0619՝ 48 սահմանային տեղ:

Դպրոցն ունի պաշտոնական կայք, որտեղ տեղադրվում են դպրոցի գործունեությանն առնչվող տեղեկատվություններ, հաշվետվություններ՝ https://dashtademl.schoolsite.am/:

Դպրոցում կրթությունն իրականացվում է 5-օրյա աշխատանքային շաբաթով:

Դպրոցում 2023-2024 ուսումնական տարում գործում է 5 դասարան, որտեղ կրթություն են ստանում 12 աշակերտ:

Դպրոցի լիազոր կառավարումն իրականացնում է ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմը:

ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Դպրոցի շենքը կառուցվել է 1929 թվականին, այն հարմարեցված տիպի երկհարկանի կառույց է, բաղկացած հինգ մասնաշենքերից, որոնցից գործում է միայն ուսումնական մասնաշենքը: 2006 թվականին իրականացվել է շենքի սեյսմիկ գնահատում, որի արդյունքում տրվել է վթարային 3-րդ աստիճանի եզրակացություն: Դպրոցի շենքը չունի նկուղ, պատուհանները հիմնականում հին են և ենթակա են փոխարինման,փոխված է մուտքի դուռը, համակարգչային սենյակի, ճաշարանի դռներն ու պատուհանները: Հաշվի առնելով, որ համայնքը գազաֆիկացված չէ, դպրոցի շենքում ջեռուցումը կազմակերպվում է վառելափայտով (բրիկետ): Դպրոցի շենքին կից առկա է պտղատու այգի, որի մշակմամբ իրենց նախաձեռնությամբ զբաղվում են նաև սովորողները: 2002 թվականի հունվարի 30-ինդպրոցի շենքը ստացել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում՝ N479450: Դպրոցի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 15 000 քառակուսի մետր:

Դպրոցի ուսումնական մասնաշենքի ընդհանուր մակերեսը, ներառյալ միջանցքները կազմում է 786,6 քառակուսի մետր, որում առկա է 17 սենյակ՝ ըստ հետևյալ բաշխվածքի և վիճակի՝

Հ/Հ	Սենյակը	Քանակը /հատ/	Մակերեսը /քառակուսի մետր/	Կարիքի գնահատումը և վիճակը
1	Տնօրենի սենյակ	1	18,9	Կարիք ունի ընթացիկ վերանորոգման
2	Դասասենյակ	5	166,8	Վերանորոգվել են 2014-2021թթ.
3	ՆԶՊ սենյակ	1	4,6	Վերանորոգված է 2017թ.
4	Ուսուցչանոց	1	30,5	Վերանորոգված է 2015թ.
5	Համակարգչային սենյակ	1	29,8	Վերանորոգված է 2016թ.
6	Ճաշարան	1	37,1	Վերանորոգված է 2021թ.
7	Սննդի պահեստ	1	13,1	Վերանորոգված է 2021թ.
8	Դահլիճ	1	51,8	Վերանորոգված

				է 2021թ.
9	Գրադարան	1	35,3	Կարիք ունի վերանորոգման
10	Տեխնիկական նշանակության այլ սենյակներ	4	125,3	Կարիք ունեն վերանորոգման
ԸՆԴԱՄԵՆԸ		**17**	**513,2**	

Դպրոցի մյուս մասնաշենքերում առկա է կիսաքանդ վիճակում գտնվող 606,3 քառակուսի մետր մակերեսով արհեստանոց, 144,3 քառակուսի մետր մակերեսով ճաշարանի տարածք, 57,1 քառակուսի մետր մակերեսով կաթսայատուն, 16,0 քառակուսի մետր մակերեսով պահակակետ:

Դպրոցում խորհրդային տարիներից մնացած բազմաթիվ լաբորատոր նյութեր և սարքեր կան, որոնք սակայն պիտանի չեն օգտագործման համար:

Դպրոցում մարզադահլիճ և մարզահրապարակ չկա, իսկ սանհանգույցը գտնվում է դրսում:

Դպրոցի շենքի մուտքը կահավորված է թեքահարթակով:

ԴՊՐՈՑԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԴՊՐՈՑԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցի դասասենյակներում և մի քանի առանձին սենյակներում վերջին տարիներին իրականացվել է ընթացիկ նորոգում	Դպրոցի շենքը գնահատվել է 3-րդ աստիճանի վթարային
Դպրոցի տարածքը բավարար է սովորողների կրթության կազմակերպման համար	Դպրոցում շենում բացակայում է մարզադահլիճը, լաբորատորիաները
Դպրոցը գտնվում է գյուղի սկզբնամասում և հեռացված է ճանապարհային գոտուց	Դպրոցի շենքում չկա սանհանգույց, որպես սանհանգույց ծառայում է դրսում ինքնաշեն կառույցը
Դպրոցի տարածքում առկա է պտղատու այգի, որի մշակմանը մասնակցում են նաև սովորողները	Դպրոցում ջեռուցվում է միայն առանձին սենյակներ՝ վառելափայտով, ձմռան ամիսներին ոչ միշտ է ապահովվում բավարար ջերմաստիճան

	Դպրոցում բացակայում է արտաքին լուսավորությունը

ԴՊՐՈՑԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Դպրոցում առկա են բավարար քանակով նյութատեխնիկական պարագաններ, որը հնարավորություն է տալիս կազմակերպել ուսումնական գործընթացը: Մասնավորապես դպրոցում առկա է աշակերտական և ուսուցչական սեղաններ, աթոռներ, գրատախտակներ, գրասեղաններ:

Դպրոցը վերջին տարիներին համալրվել է համակարգչային տեխնիկայով և այլ սարքավորումներով, մասնավորապես՝

1. Ուսումնական համակարգիչ – 4 հատ,
2. Աշխատանքային համակարգիչ – 1 հատ,
3. Պրոյեկտոր – 1 հատ,
4. Տպիչ – 1 հատ,
5. Բազմաֆունկցիոնալ սարք – 1 հատ,
6. Պլանշետ - 4 հատ:

Դպրոցում օգտագործման ենթակա, պիտանի լաբորատոր գույք առկա չէ:

Դպրոցում առկա է գրադարան, սակայն համալրված չէ ժամանակակից գրականությամբ, մեթոդական ձեռնարկներով:

Դպրոցի արհեստանոցում շահագործման համար պիտանի սարքավորումներ և գործիքներ առկա չեն:

Մարզադահլիճի բացակայությանը զուգահեռ դպրոցում առկա չէ նաև մարզական որևէ գույք:

Լաբորատոր նյութերը և սարքավորումները խորհրդային ժամանակաշրջանից են և պիտանի չեն շահագործման:

Դպրոցը որպես նվիրատվություն 2021 թվականին ստացել է սառնարան, ջրատաքացուցիչ, մասնակցում է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրին:

ԴՊՐՈՑԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԴՊՐՈՑԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցում առկա գույքի վիճակը գնահատվում է լավ	Դպրոցում բացակայում է մարզական գույք, լաբորատոր նյութեր

Դպրոցի համակարգչային գույքը բավարար է արդյունավետ ուսուցման գործընթաց կազմակերպելու համար	Դպրոցի գրադարանում համալրումներ չեն իրականացվել վերջին տարիներին
	Դպրոցում բժշկական առաջին օգնության նյութեր առկա չեն
	Դպրոցի արհեստանոցում պիտանի գույք առկա չէ

ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Դպրոցի կառավարման մարմիններն են՝

1. Հիմնադիրը,
2. Տարածքային կառավարման մարմինը՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ,
3. Կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը,
4. Գործադիր մարմինը՝ տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը։

Դպրոցը ղեկավարվում է հիմնադրի, լիազոր մարմնի կողմից ընդունված որոշումներով, կարգերով, հրամաններով։

2021 թվականին դպրոցի կանոնադրության փոփոխությունից հետո ձևավորվել է նոր կառավարման մարմին, որը միաժամանակ իրականացնում է ՀՀ Լոռու մարզի Դաշտադեմի և Զյունաշողի միջնակարգ դպրոցների կառավարումը։

Դպրոցի կառավարման խորհուրդը ձևավորումից հետո գումարել է ընդամենը 9 նիստ հետևյալ ժամկետներում և օրակարգերով՝

Նիստ 17.05.2021թ.

Օրակարգային հարցեր՝ Դպրոցի կոլեգիալ կառավարման խորհրդի նոր կազմի, խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրություն։

Ղեկավարվելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի մարտի 15-ի թիվ 25 հրամանով ՀՀ Լոռու մարզպետի 2021 թվականի մայիսի 10-ի թիվ 231-Ա որոշումով ձևավորվել է նոր միացյալ կառավարման խորհուրդ հետևյալ կազմով՝

Հ/Հ	Ազգանուն, անուն	Ում կողմից է առաջադրված
1	Մարգարյան Սոֆիկ	Դաշտադեմի միջնակարգ դպրոցի մանկավարժական խորհուրդ
2	Զախարյան Ինգա	Դաշտադեմի միջնակարգ դպրոցի մանկավարժական խորհուրդ
3	Առաքելյան Քրիստինե	Դաշտադեմի միջնակարգ դպրոցի ծնողական խորհուրդ
4	Կարապետյան Մարինե	Դաշտադեմի միջնակարգ դպրոցի ծնողական խորհուրդ
5	Քոսյան Հովհաննես	Դաշտադեմ համայնքի կողմից
6	Ազոյան Նարինե	Դաշտադեմի միջնակարգ դպրոցի մանկավարժական խորհուրդ

7	Աբրահամյան Սյուզաննա – միացյալ կառավարման խորհրդի նախագահ	Դաշտադեմի միջնակարգ դպրոցի մանկավարժական խորհուրդ
8	Գրիգորյան Գայանե - միացյալ կառավարման խորհրդի քարտուղար	Դաշտադեմի միջնակարգ դպրոցի ծնողական խորհուրդ
9	Սուքիասյան Սյուզաննա	Դաշտադեմի միջնակարգ դպրոցի ծնողական խորհուրդ
10	Սուքիասյան Մելինե	Ձյունաշող համայնքի կողմից
11	Սոլոյան Արարատ	Լոռու մարզպետի կողմից
12	Ավետիսյան Լիլիթ	Լոռու մարզպետի կողմից
13	Բաղոյան Մարտիկ	ՀՀ ԿԳՄՄՆ կողմից
14	Շիրաչյան Արշակ	ՀՀ ԿԳՄՄՆ կողմից

Նիստ 14.06.2021թ.

Օրակարգային հարցեր՝ Դպրոցների ճաշարանների վերանորոգման աշխատանքներ կատարելու մասին։

Հավանություն տրվեց դպրոցների բյուջեների հաշվին ճաշարանի վերանորոգմանը։

Նիստ 27.08.2021թ.

Օրակարգային հարցեր՝ Դպրոցների 2021թ. հաստիքացուցակի քննարկում։

Հավանություն տրվեց դպրոցների հաստիքացուցակներին։

Նիստ 06.10.2021թ.

Օրակարգային հարցեր՝ Դաշտադեմի միջնակարգ դպրոցին ջեռուցման սեզոնին նախապատրաստվելու համար թույլատրել ձեռք բերել վառելափայտ։

Թույլատրվեց ձեռք բերել վառելափայտ։

Նիստ 20.12.2021թ.

Օրակարգային հարցեր՝ Դաշտադեմի միջնակարգ դպրոցի բոլոր աշխատողներին պարգևատրելու մասին։

Որոշվեց բոլոր աշխատողներին պարգևատրել 30 000-ական դրամներով։

Նիստ 05.01.2022թ.

Օրակարգային հարցեր՝ Դպրոցների 2022 թվականի հաստիքացուցակի քննարկում։ Հավանություն տրվեց դպրոցների հաստիքացուցակներին։

Նիստ 25.08.2022թ.

Օրակարգային հարցեր՝ Դպրոցների 2022 թվականի հաստիքացուցակի քննարկում։

Հավանություն տրվեց դպրոցների հաստիքացուցակներին։

Նիստ 10.10.2022թ.

Օրակարգային հարցեր՝ Դաշտադեմի միջնակարգ դպրոցին ջեռուցման սեզոնին նախապատրաստվելու համար թույլատրել ձեռք բերել վառելափայտ։

Թույլատրվեց ձեռք բերել բրիկետային վառելիք։

Նիստ 05.01.2023թ.

Օրակարգային հարցեր՝ Դպրոցների 2023 թվականի հաստիքացուցակի քննարկում։

Հավանություն տրվեց դպրոցների հաստիքացուցակներին։

Դպրոցների միացյալ կառավարման մարմնի բոլոր անդամները մասնակցել են նիստերին։ Կառավարման խորհուրդը ձևավորումից հետո չնայած գումարել է մի շարք նիստեր, այնուամենայնիվ, յուրաքանչյուր եռամսյակում պարտադիր նիստեր գումարելու պահանջը չի պահպանվել, ինչպես նաև քննարկվել են խորհրդի լիազորության դաշտի ոչ բոլոր հարցերը։

Դպրոցում առաջիկայում կհայտարարվի մրցույթ վարչատնտեսական մասի համակարգողի հաստիքը համալրելու համար, ներկայումս այդ գործառույթներն իրականացնում է դպրոցի տնօրենը։

Դպրոցում գործում է ըստ կարգի ձևավորված կառավարման խորհուրդ	Կառավարման խորհրդի անդամների կեսը չի տիրապետում իր պարտականություններին, չունեն բարձրագույն կրթություն
Կառավարման խորհրդի բոլոր անդամները մասնակցել են գումարված նիստերին	Դպրոցի կառավարման խորհուրդը սահմանված ժամկետներում չի գումարել նիստերը
Տնօրենը խորհրդակցական ձայնով մասնակցել է հրավիրված բոլոր նիստերին	Դպրոցի կառավարման խորհուրդը սահմանված կարգով չի քննարկել իր լիազորության դաշտում գտնվող բոլոր հարցերը
Դպրոցը ղեկավարվում է հիմնադրի, լիազոր մարմնի կողմից ընդունված որոշումներով, կարգերով, հրամաններով	Կառավարման խորհրդի նիստերի արձանագրությունները չեն հրապարակվել դպրոցական կայքում
Դպրոցի տնօրենը մասնակցում է լիազոր մարմնի կողմից կազմակերպվող խորհրդակցություններին	
Դպրոցի կառավարման մարմնի մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից ընտրված անդամները մասնակցում են կրթության գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներին	

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՇԱՀԱՌՈՒ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Դպրոցն ապահովում է ՀՀ Լոռու մարզի Դաշտադեմ գյուղի երեխաների կրթության ստացումը: Դաշտադեմ գյուղը 2017 թվականից ընդգրկվել է Տաշիր խոշորացված համայնքի կազմում, և կապն ապահովվում է գյուղի վարչական ղեկավարի միջոցով: Համայնքի հետ ձևավորվել է արդյունավետ համագործակցության մթնոլորտ և համայնքն իր հնարավորությունների և դպրոցի կարիքների սահմաններում ցուցաբերում է հնարավոր անհրաժեշտ օգնություն: Օրինակ, ձմռան ամիսներին ձնաբքի պատճառով հաճախ է փակվում կամ դժվարանցանելի դառնում գյուղի ճանապարհը, որը դժվարություններ է ստեղծում գյուղից դուրս բնակվող ուսուցչական կազմի դպրոց հասնելուն: Համայնքը նմանատիպ դեպքերում օպերատիվորեն տրամադրում է համապատասխան տեխնիկա ճանապարհը բացելու համար: Համայնքը միջոցառումների ժամանակ աշակերտական, ուսուցչական կազմին տրամադրում է նվերներ: Գյուղի բոլոր երեխաները հաճախում են դպրոց, բացակայությունները շատ քիչ են:Համայնքը մշտապես կանգնած է դպրոցի կողքին:

Կրթության կառավարման մարմիններն են՝

1. ՀՀ կառավարությունը,
2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը,
3. Տարածքային կառավարման մարմինը՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ,
4. Տեղական ինքնակառավարման մարմինը՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնք:

Դպրոցում կրթական գործընթացը կազմակերպվում է ՀՀ կառավարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ընդունված կարգերով և չափորոշիչներով: Տնօրենը մասնակցել է ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից կազմակերպված խորհրդակցություններին, ներկայացրել է հաշվետվություններ, մարզպետի աշխատակազմի կողմից հաստատվելեն նախահաշիվները, հաստիքացուցակները:

Դպրոցում յուրաքանչյուր տարի ըստ կարգի ձևավորվել է ծնողական խորհուրդ, բայց հաշվի առնելով դպրոցում աշակերտների թիվը, կրթական գործընթացում ընդգրկվել են բոլոր ծնողները, նրանք մասնակցել են դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, երեխաների համար դպրոցի հետ համատեղ կազմակերպել են արշավներ, էքսկուրսիաներ,

ծնողներն աջակցում են նաև դպրոցում կատարվող ֆիզիկական աշխատանքներին, օրինակ՝ վառելափայտի տեղափոխում, դասավորում:

Դպրոցը համագործակցում է նաև մարզում տեղակայված զորամասերի հետ, աշակերտներն այցելում են զորամասեր, ծանոթանում զինվորական կյանքին:

Դպրոցը համագործակցում է ԿՏԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի հետ, իրականացվում են ուսուցիչների վերապատրաստումներ:

ԴՊՐՈՑԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԴՊՐՈՑԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Առկա է համայնքի հետ ակտիվ համագործակցություն	Համագործակցությունը տարածաշրջանի այլ դպրոցների հետ կարիք ունի ավելացման
Կրթություն են ստանում գյուղի բոլոր երեխաները	Ծնողներն էլեկտրոնային հարթակներից չեն օգտվում
Դպրոցն առաջնորդվում է կրթության կառավարման մարմինների որոշումներով, կարգերով, հրամաններով	Երկարօրյա ուսուցում չի կազմակերպվում դպրոցում
Ծնողական համայնքն ակտիվ ներգրավված է դպրոցական կյանքին	
Դպրոցի կողմից կազմակերպվող միջոցառումներին մասնակցություն ունեն համայնքի ներկայացուցիչները	
Դպրոցը համագործակցում է ՀՀ ՊՆ, ԿՏԱԿ, ԿԶՆԱԿ և կրթության ոլորտի այլ կազմակերպությունների հետ	
Դպրոցի տնօրենը մասնակցում է լիազոր մարմնի ժողովներին	

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ

Դպրոցում մանկավարժական կազմի ապահովումը լրջագույն խնդիր է դարձել, հաշվի առնելով տարածաշրջանային և դպրոցի գտնվելու վայրի առանձնահատկությունները: Այդ իսկ պատճառով որոշ առարկաներ, մասնավորապես՝ քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա, մասնագետներ չլինելու պատճառով կազմակերպվում են հեռավար եղանակով մենթոր ուսուցիչների միջոցով: Հեռավար ուսուցում կազմակերպելու ընթացքում օգտագործվում են տեղեկատվական տեխնոլոգիաները, համակարգիչները, Դասավանդիր Հայաստանի կողմից նվիրաբերված պլանշետները և դպրոցում առկա այլ սարքավորումները:

Դպրոցի մանկավարժական համակազմում բարձրագույն կրթություն չունի երկու մանկավարժ, որոնք չեն հաղթահարել նաև կամավոր ատեստավորման անցողիկ շեմը: Նրանք ազատվել են աշխատանքից, սակայն, համապատասխան մասնագետների բացակայությամբ պայմանավորված, կրկին ընդունվել են ժամանակավոր աշխատանքի մինչև թափուր հաստիքների համալրումը:

Մանկավարժական կազմը և մասնագիտական որակները ներկայացնող ցուցանիշները ստորև՝

Անուն, ազգանուն	**Պաշտոնը**	**Կրթությունը**	**Դպրոցում աշխատելու ժամանակը**	**Տարիքը**	**Վերջին վերապատ-րաստումը**
Խոռյան Արմեն	զինղեկ	բարձրագույն	2014թ	56տարեկան	2021թ.
Անի Խոռյան	դասվար	բարձրագույն	2006թ	34տարեկան	2020թ.
Ինգա Զախարյան	Ուսուցիչ, ժամանակավոր աշխատող	միջին մասնագիտական	1989թ	59տարեկան	2022 թ.
Արմինե Խոռյան	դասվար	բարձրագույն	2017թ	32տարեկան	2021թ.
ՄարինեԽոռյան	ուսուցիչ	բարձրագույն	2019թ	52տարեկան	2023թ.

Սոֆիկ Մարգարյան	ԴԱԿ	բարձրագույն	2010թ	65տարեկան	2019թ.
ԳայանեԽռոյան	ուսուցիչ	բարձրագույն	2021թ	32տարեկան	2023թ.
ՇուշանիկԹանգամյան	Ուսուցիչ, ժամանակավոր աշխատող	միջին մասնագիտական	2015թ	62տարեկան	
Նարինե Հարությունյան	ուսուցիչ	բարձրագույն	2021թ	28տարեկան	
Անի Մկրտչյան	ուսուցիչ	բարձրագույն	2022թ	39տարեկան	
Մարգարիտա Անտոնյան	մենթոր ուսուցիչ, համատեղու-թյամբ, կամավոր ատեստավոր-ված	բարձրագույն	2022թ	54տարեկան	
Անգին Մովսեսյան	մենթոր ուսուցիչ, համատեղու-թյամբ, կամավոր ատեստավոր-ված	բարձրագույն	2022թ	62 տարեկան	
Անուշ Բայրամյան	մենթոր ուսուցիչ, համատեղու-թյամբ, կամավոր ատեստավոր-ված	բարձրագույն	2022թ	45տարեկան	

ԼիլիաԶաքարյան	Ուսուցիչ, Արցախիցբռնիտեղահանված՝ԿԳ ՄՄնախարարությանկողմիցուղեգրվածուսուցիչ	բարձրագույն	2023թ.	33 տարեկան	
ՄերիՄուրադյան	փոխարինողուսուցիչ, ժամանակավոր աշխատող	բարձրագույն	2024թ	27տարեկան	

Մանկավարժական կազմի միջին տարիքը կազմում է 45 տարեկան, սակայն դա պայմանավորված է տարիքային բևեռացմամբ, մասնավորապես անձնակազմը բաժանված է երիտասարդ և միջինից բարձր տարիքի մանկավարժների: Անձնակազմի ավելի քան 33 տոկոսի տարիքը գերազանցում է 55 տարեկանը:

Մանկավարժների մասնագիտական այլ որակներ ներկայացված է ուժեղ և թույլ կողմերի վերլուծության մեջ՝

ԴՊՐՈՑԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԴՊՐՈՑԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Բացի ժամանակավոր աշխատող մանկավարժներից մյուս մանկավարժներն ունեն բարձրագույն կրթություն և դասավանդում են ըստ իրենց մասնագիտության	Դպրոցի հիմնական անձնակազմից կամավոր ատեստավորված, տարրակարգ, գիտական կոչում ունեցող մանկավարժներ չկան
Կամավոր ատեստավորված են միայն մենթոր ուսուցիչները	Դպրոցում բաց դասեր չեն իրականացվում
Յուրաքանչյուր ուսումնական տարի պարտադիր վերապատրաստվել են ուսուցիչների 20 տոկոսը	Ուսուցիչները փոխադարձ դասալսումներ չեն կատարում

Բոլոր ուսուցիչներն ունեն համակարգչային գիտելիքներ և կարողանում են օգտագործել համակարգչային տեխնիկաները ուսուցման գործընթացում	Ոչ միշտ են բոլոր ուսուցիչները կազմում դասի օրական պլաններ
Ուսուցիչները պարտադիր կազմում են դասի թեմատիկ տարեկան պլանները	Ուսուցչական կազմում մեծ տարիքով ուսուցիչների թիվը մեծ է, ապագայում սերնդափոխության լուրջ խնդիրներ կան
Պարբերաբար կազմակերպվում են քննարկումներ մասնագիտական, դասավանդման հմտությունների բարձրացման թեմաներով	

ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցում առկա են բավարար քանակով ՏՀՏ սարքավորումներ, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել նաև հեռավար դասընթացներ: ՏՀՏ սարքավորումների ցանկը ներկայացված է նյութատեխնիկական բազան ենթագլխում:

Համակարգչային սենյակն իր ողջ ներուժով մշտապես հասանելի է թե սովորողներին, և թե մանկավարժներին: Բացի հեռավար եղանակով կազմակերպվող դասընթացներից, ՏՀՏ տեխնոլոգիաները կիրառվում են նաև առկա եղանակով կազմակերպվող դասընթացներին:

Ուսուցչական ողջ կազմը կարողանում է օգտվել համակարգիչներից և տիրապետում է հիմնական պահանջվող գործիքներին: Փոքր ինչ դժվարություններ առաջանում են տարեց մանկավարժների մոտ, որոնց սակայն օժանդակում են անձնակազմի մյուս անդամները: Պարտադիր կարգով լրացվում են էլեկտրոնային մատյանները:

Դպրոցն ունի կայք, որտեղ տեղադրվում են դպրոցի կառավարման, ուսումնադաստիարակչական, ֆինանսատնտեսական գործունեություններին առնչվող նյութեր, հաշվետվություններ, սակայն թարմացումները պարբերական բնույթ չեն կրում, որը պայմանավորված է նաև դպրոցում համապատասխան մասնագետի բացակայությամբ:

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները, ովքեր չունեն համակարգիչ, ազատորեն կարողանում են օգտագործել դպրոցի համակարգիչները ուսումնական նյութերին ծանոթանալու, սովորելու նպատակով:

Դպրոցի կառավարման գործընթացի կազմակերպման համար առանձնացված է առանձին համակարգչային տեխնիկա:

Դպրոցում այլ կրթական տեխնոլոգիաներ, նորարարություններ, լաբորատորիաներ չեն օգտագործվում/չեն գործում :

Այս ուղղության ուժեղ և թույլ կողմերը ներկայացնենք հետևյալ ուղղություններով՝ կրթական գործընթաց, ուսումնադաստիարակչական աշխատանքներ, կառավարման գործընթաց և վարչատնտսական գործունեություն:

ԴՊՐՈՑԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԴՊՐՈՑԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Բոլոր ուսուցիչները կարողանում են օգտվել ՏՀՏ սարքավորումներից	Դպրոցում չկան ժամանակակից լաբորատորիաներ

Դպրոցում ստեղծված են բավարար պայմաններ հեռավար, առցանց դասընթացների, ուսուցման կազմակերպման համար	Դպրոցի կայքում թարմացումները իրականացվում են ոչ պարբերական
Դպրոցում մատյանները վարվում են էլեկտրոնային եղանակով	Դպրոցում էլեկտրոնային գրականության պակաս կա
Ուսուցիչները մասնակցում են առցանց մասնագիտական վերպատրաստման դասընթացներին	Ծնողները չեն հետևում էլեկտրոնային օրագրերին
Դպրոցն ունի պաշտոնական կայք, էլեկտրոնային փոստ, հաղորդակցությունները կրթության կառավարման մարմինների հետ իրականացվում են էլեկտրոնային եղանակով	Դպրոցը չունի էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետ
Դպրոցում փաստաթղթավարումը հիմնականում իրականացվում է էլեկտրոնային եղանակով	
ՏՀՏ միջոցների կիրառումը էապես նպաստում է կրթության որակի բարձրացմանը	
Ֆինանսական կառավարումը դպրոցում իրականացվում է էլեկտրոնային ծրագրերի միջոցով	
Դպրոցն ապահովված է ինտերնետ կապով	

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ

Դպրոցում սովորողների ցածր թվով պայմանավորված վերջին տարիներին ուսուցումը հիմնականում կազմակերպվել է կոմպլեկտավորված դասարաններում:

2023-2024 ուսումնական տարում դպրոցում գործում է ընդամենը հինգ դասարան, և այս պատկերով առաջիկա 4 տարիներին դպրոցը միջնակարգ կրթությամբ շրջանավարտ չի ունենա:

Դասարանների և աշակերտների վերաբերյալ թվային տվյալների դինամիկան ստորև՝

Դասարան	ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ		
	2021-2022 ուսումնական տարի	2022-2023 ուսումնական տարի	2023-2024 ուսումնական տարի
1-ին դասարան	0.5	0.5	0.5
2-րդ դասարան	0.5	0.5	
3-րդ դասարան	0.5	0.5	0.5
4-րդ դասարան	0.5	0.5	1
5-րդ դասարան	0.3	0.5	1
6-րդ դասարան	0.3	0.5	0.5
7-րդ դասարան		0.5	1
8-րդ դասարան	0.3		0.5
9-րդ դասարան		0.5	
10-րդ դասարան			
11-րդ դասարան			
12-րդ դասարան	1	1	
ԸՆԴԱՄԵՆԸ	**4**	**5**	**5**

Դասարան	ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎԸ		
	2021-2022 ուսումնական տարի	2022-2023 ուսումնական տարի	2023-2024 ուսումնական տարի
1-ին դասարան	1	1	2
2-րդ դասարան	2	1	0

3-րդ դասարան	3	3	1
4-րդ դասարան	1	3	2
5-րդ դասարան	3	1	3
6-րդ դասարան	1	3	1
7-րդ դասարան	0	1	2
8-րդ դասարան	1	0	1
9-րդ դասարան	0	2	0
10-րդ դասարան	0	0	0
11-րդ դասարան	0	0	0
12-րդ դասարան	2	1	0
ԸՆԴԱՄԵՆԸ	**14**	**16**	**12**

Հաշվի առնելով, որ ավարտական դասարաններում սովորողների թիվը շատ փոքր է եղել, ուսումնառության արդյունքները ներկայացնենք ըստ ուսումնական տարիների և ըստ սովորողների։ Համեմատականներ գրեթե չեն իրականացվել նախորդ տարվա համապատասխան արդյունքների հետ, դասարաններում սովորողների բացակայությամբ պայմանավորված՝

2021-2022ուսումնական տարի 4-րդ դասարան

Առարկա	**Սովորող 1**
Մայրենի	9
Մաթեմատիկա	8

2022-2023ուսումնական տարի 4-րդ դասարան

Առարկա	**Սովորող 1**	**Սովորող 2**	**Սովորող 3**
Մայրենի	9	9	9
Մաթեմատիկա	9	9	9

2021-2022ուսումնականտարի 9-րդդասարանքննական գնահատականներ՝

Առարկա	Սովորող 1	Սովորող 2
Հայոց պատմություն	12	17
Աշխարհագրություն	12	15
Ռուսաց լեզու	18	16
Հայոց լեզու	11	12
Մաթեմատիկա	11	11
Գրականություն	12	14

2022-2023ուսումնական տարի 12-րդ դասարան քննական գնահատականներ

Առարկա	Սովորող 1
Հայոց պատմություն	19
Մաթեմատիկա	18
Հայոց լեզու /միասնական/	14.5
Ռուսաց լեզու/միասնական/	14
Ֆիզկուլտուրա	9

2020-2021 ուսումնական տարում դպրոցում գերազանց առաջադիմությամբ սովորողներ չեն եղել, 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիներին մեկական գերազանց առաջադիմությամբ սովորողներ համապատասխանաբար տարրական և ավագ դասարաններում:

2022-2023 ուսումնական տարում մեկ սովորող մասնակցել է միասնական քննություններին և ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն, ևս 2 սովորող հիմնական դպրոցի ավարտից հետո կրթությունը շարունակել են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում:

ԴՊՐՈՑԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԴՊՐՈՑԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Ուսուցիչները մշակում են դասի պլաններ	Դպրոցն օլիմպիադաներին մասնակիցներ չի ունեցել վերջին տարիներին
Սովորողների ուսումնառության արդյունքները բավարար են	Դպրոցում լաբորատոր փորձեր չեն իրականացվում /բնագիտական առարկաները դասավանդվում են հեռավար/
Նախորդ ուսումնական տարվա շրջանավարտն ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն, միասնական քննություններին ցուցաբերելով բարձր արդյունքներ	
Առանձին առարկաների ուսուցումը չնայած կազմակերպվում է հեռավար, այնուամենայնիվ արդյունքները գոհացուցիչ են	
Այս ուսումնական տարում 7-րդ դասարանում նախատեսված է նախագծային աշխատանքի կատարում	

ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակել է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Դպրոցում կրթական գործընթացն իրականացվում է բոլոր մասնակիցների ներառմամբ: Դպրոցում վերջին տարիներին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ հաշվառված չեն եղել:

Հաշվի առնելով կրթության գործընթացի մասնակիցների փոքր թիվը, չնայած ըստ կարգի դպրոցում ձևավորված է խորհրդակցական մարմիններ, այնուամենայնիվ սովորողների կամ ծնողների հետ աշխատանքներն իրականացվում են ծնող-ուսուցիչ անմիջական կապի ապահովմամբ: Ծնողները չնայած գրեթե չեն օգտագործում էլեկտրոնային գործիքներ, իրենց երեխաների ուսումնառությանը հետևելու համար, բայց և այնպես ուսուցիչ-ծնող անմիջական կապը թույլ է տալիս արագորեն շտկել խնդիրները և սովորողների մոտ ապահովել ուսումնառության բարձր արդյունքներ: Դպրոցի շրջանավարտների գերակշիռ մասն ուսուցումը շարունակել է բարձրագույն ուսումնական հաստատություններում կամ 9-րդ դասարանի ավարտից հետո միջին մասնագիտական կրթական հաստատություններում:

Դպրոցում կազմակերպվող միջոցառումներում ընդգրկված են բոլոր սովորողները, և սովորողների քիչ թվով պայմանավորված հիմնականում իրականացվում են համադպրոցական միջոցառումներ:

Դպրոցում տիրում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, բռնության, օտարման, հալածանքի, ծխախոտի օգտագործման դեպքեր չեն արձանագրվել, դպրոցում սովորողների շրջանում տիրում է ընկերական մթնոլորտ, չնայած այս ամենին դասղեկի ժամերին պարբերաբար անդրադարձ է կատարվում բռնության, օտարման, հալածանքի կանխարգելման կարևորությանը, ծխախոտի և այլնի վնասակար հատկություններին:

ԴՊՐՈՑԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԴՊՐՈՑԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Կրթության գործընթացի բոլոր մասնակիցները ներգրավված են դպրոցի կառավարմանը	Կայացված որոշումները կարիք ունեն բոլորին հասանելի տարբերակով հրապարակման՝ կառավարման առավել թափանցիկությունն ապահովելու համար

Դպրոցում բռնության, օտարման, հալածանքի, ծխախոտի օգտագործման դեպքեր չեն արձանագրվել, կանխարգելմանն ուղղված միջոցառումներն իրականացվում են ըստ ծրագրի	
Դպրոցում ձևավորված է բազմակարծիք միջավայր, հաշվի են առնվում բոլոր կողմերի կարծիքներն ու առաջարկությունները	
Տնօրենը մասնակցում է խորհրդակցական մարմինների նիստերին, կազմակերպում է մանկավարժական խորհրդի աշխատանքները	
Դպրոցում պաշտպանված են սովորողների սոցիալական, կրթական և առողջապահական շահերը	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցն իր հնարավորությունների սահմաններում իրականացնում է աշխատակազմի արժևորում և խրախուսում: Դպրոցի ֆինանսական հնարավորությունները թույլ են տվել 2021 թվականի տարեկան արդյունքներով դպրոցի ամբողջ աշխատակազմին պարգևատրել միանվագ 30 հազարական դրամներով: Դպրոցում աշխատակազմի արժևորումը և խրախուսումը հիմնականում իրականացվում է ոչ նյութական միջոցներով՝ պատվոգրերի, շնորհակալագրերի տրամադրում:

Դպրոցում ինքնակրթության հնարավորություններ առկա են, սակայն այդ հնարավորությունների օգտագործումը մանկավարժների կողմից ցածր է: Մանկավարժները խուսափում են կամավոր ատեստավորմանը մասնակցելուց: 2023 թվականին միջին մասնագիտական կրթություն ունեցող երկու մանկավարժներ օրենսդրական կարգավորմամբ պարտադրված մասնակցել են կամավոր ատեստավորմանը, սակայն չեն հավաքել անցողիկ միավորներ:

Առանձին մանկավարժներ երբեմն սեփական նախաձեռնությամբ մասնակցում են տարբեր դասընթացների, հիմնականում առցանց հարթակում կազմակերպվող անվճար դասընթացներին: Հիմնական վերապատրաստումներն անցնում են դպրոցի նախաձեռնությամբ՝ օրենսդրությամբ սահմանված պահանջների ապահովման նպատակով:

ԴՊՐՈՑԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԴՊՐՈՑԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Ֆինանսական միջոցների առկայության դեպքում աշխատակազմին տրամադրվում է դրամական խրախուսում	Դպրոցի երկու ուսուցիչներ չեն հաղթահարել կամավոր ատեստավորման անցողիկ շեմը
Աշխատակազմի անդամները խրախուսվում, արժևորվում են պատվոգրերով, շնորհակալագրերով	Սեփական նախաձեռնությամբ ուսուցիչները մասնակցում են փոքր թվով վերապատրաստումների

Դպրոցի նախաձեռնությամբ կազմակերպվում են մանկավարժական կազմի վերապատրաստման դասընթացներ	Դպրոցի կողմից վերապատրաստումների համար հատկացվող ֆինանսական միջոցների ծավալը փոքր է ընդհանուր կառուցվածքում
Դպրոցում առցանց հեռավար եղանակով դասավանդում են կամավոր ատեստավորման շեմը հաղթահարած երեք մենթոր ուսուցիչներ	Այլ դպրոցների գործընկերների հետ ուսուցիչների համագործակցությունը ցածր է
Դպրոցում փորձառու ուսուցիչներն օժանդակում են սկսնակներին	

ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

		2021 ԹՎԱԿԱՆ	2022 ԹՎԱԿԱՆ	2023 ԹՎԱԿԱՆ	ԱՃԸ ԿԱՄ ՆՎԱԶՈՒՄԸ 2023Թ-ԻՆ 2022Թ.ՀԱՄԵՄԱՏ
1	**Սկզբնական մնացորդ**	**6 459 606,4**	**3 138 724,4**	**2 878 712,6**	**- 260 011,8**
2	**Ֆինանսավորում**	**22 919 700,0**	**23 663 700,0**	**27 289 900,0**	**3 626 200,0**
3	**Ընդամենը ծախսեր, այդ թվում՝**	**26 240 582,0**	**23 923 711,8**	**29 046 425,6**	**5 122 713,8**
3.1	Աշխատավարձ և հավելավճար	20 143 583,0	20 228 995,0	24 478 449,0	4 249 454,0
3.2		621 380,0	-	670 375,0	670 375,0
3.3	Էներգետիկ ծառայություն	717 207,0	677 644,8	941 482,0	263 837,2
3.4		375 000,0	174 000,0	49 000,0	-125 000,0
3.5	Տրանսպորտային ծախսեր	553 700,0	545 500,0	535 100,0	- 10 400,0
3.6	Համակարգչային ծառայություններ	140 000,0	-	95 900,0	95 900,0
3.7	Մասնագիտական զարգացման ծախսեր	20 800,0	24 000,0	51 000,0	27 000,0
3.8	Տեղեկատվական ծախսեր	48 000,0	48 000,0	45 000,0	- 3 000,0
3.9	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	1 697 656,0	858 917,0	750 903,0	- 108 014,0
3.10	Մասնագիտական ծառայություններ	120 000,0	60 000,0	162 000,0	102 000,0
3.11	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պատպանում	278 596,0	-		
3.12	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում		131 400,0	142 200,0	10 800,0
3.13	Գրասենյակային նյութեր և հագուստ	318 610,0	176 780,0	236 400,0	59 620,0

3.14	Վերապատրաստման և ուսուցման նյութեր			10 000,0	10 000,0
3.15	Առողջապահական և լաբորատոր նյութեր		12 990,0		- 12 990,0
3.16	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	375 350,0	463 855,0	406 816,6	- 57 038,4
3.17	Հատուկ նպատակային այլ նյութեր	792 800,0	388 630,0	430 300,0	41 670,0
3.18	Պարտադիր վճարներ	37 900,0	47 000,0	41 500,0	- 5 500,0
3.19	Վարչական սարքավորումներ		86 000,0		- 86 000,0
4	**Վերջնական մնացորդ**	**3 138 724,4**	**2 878 712,6**	**1 122 187,0**	**- 1 756 525,6**

ՑՈՒՑԱՆԻՇ	**2021**	**2022**	**2023**	**Փոփոխությունը (աճ կամ նվազում)**
Սովորող/ուսուցիչ հարաբերությունը	1,07	1,06	0,8	Նվազում
Սովորող/ սպասարկող անձնակազմ հարաբերությունը	3,5	4	3	Աճ-նվազում
Դասարանների միջին խտությունը	3,5	3,2	2,4	Նվազում
Մեկ սովորողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը	1,87 մլն դրամ	1,5 մլն դրամ	2,42 մլն դրամ	Նվազում-աճ
Միջին աշխատավարձը	88,3 հազար դրամ	88,7 հազար դրամ	107,4 հազար դրամ	Աճ

ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի գործունեությունը միտված է սովորողների կրթական կարիքների բավարարմանը, որն իրականացվում է հետևյալ երեք ուղղություններով՝

1.կրթական կարիքների բացահայտում, ձևակերպում և լուծման քայլերի որոշում (կառավարում),

2. կրթական կարիքների բավարարում (ուսումնադաստիարակչական աշխատանքներ),

3. կրթական կարիքների բավարարման համար նպաստավոր պայմանների ստեղծում (վարչատնտեսական գործունեություն)։

Դպրոցի կրթական կարիքների բավարարման արդյունքում պետք է ձևավորվի հայրենասեր և ազգասեր, բազմակողմանի զարգացած, կարողունակ, համամարդկային արժեքներ կրող և սեփական դիրքորոշում ունեցող, արդի մարտահրավերներին պատրաստ, մասնագիտորեն կողմնորոշված ու մրցունակ քաղաքացի։

Կրթական կարիքներն առավել բացվածքով ներկայացնենք ստորև՝

1. Դպրոցի գործունեության իրականացում օրենսդրության պահանջների պահպանմամբ,

2. Դպրոցի համագործակցության սերտացում համայնքի, ծնողական համայնքի, կրթական այլ կազմակերպությունների հետ,

3. Աշխատակազմի մասնագիտական զարգացմանն աջակցում, նրանց խրախուսում և արժևորում,

4. Դպրոցում բարձր որակավորում ունեցող մասնագետներով համալրում,

5. Նոր չափորոշչային պահանջների պահպանմամբ ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում,

6. Արտադասարանական ուսուցման կազմակերպում,

7. Բոլոր սովորողների համար կրթական գործընթացում հավասարության և համընդհանուր ներառականության ապահովում,

8. Սովորողների մոտ չափորոշչով սահմանված կարողունակությունների ձևավորում,

9. Սովորողներին ներգրավվել սոցիալական, մշակութային, սպորտային և այլ միջոցառումներում,

10. Դպրոցի ֆիզիկական միջավայրի բարելավում, ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետ իրականացում։

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻՆ, ՀԱՄԱՅՆՔԻ, ՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Դպրոցում իրականացվող կրթական գործընթացը համապատասխանում է պետության կրթական քաղաքականությանը: Դպրոցի շրջանավարտները ստացած գիտելիքների շրջանակներում հնարավորություն ունեն իրենց ուսուցումը շարունակելու բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներով սահմանված են պետության կրթական քաղաքականությունը և դրա սկզբունքները: Դպրոցի կողմից ապահովվում է ձևակերպված սկզբունքների պահպանմամբ պետության կրթական քաղաքականության իրականացումը, որի համար առկա են բավարար հնարավորություններ: Միաժամանակ հաշվի են առնված ինչպես համայնքի, այնպես էլ մյուս շահառու խմբերի բոլոր կարիքները: Ներկայացվածի առհավատչյան դպրոցի ընթացիկ գործունեության վերլուծությունն է, որը ներկայացված է զարգացման ծրագրում:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ԵՎ ՆԵՐՈՒԺԻՆ

Դպրոցի շենքային պայմանների, ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազայի մանրամասն վերլուծություն ներկայացված է զարգացման ծրագրի առաջին երկու բաժիններում:

Այնուամենայնիվ ամփոփ ներկայացնենք ենթակառուցվածքների հիմնական առանձնահատկությունները՝

- Դպրոցի շենքը կառուցվել է 1929 թվականին և ներկայումս գնահատված է 3-րդ աստիճանի վթարային,
- Դպրոցի մուտքում առկա է թեքահարթակ,
- Դպրոցի սանհանգույցը դպրոցի շենքից դուրս է,
- Դպրոցում չկա բուժկետ,
- Դպրոցի լաբորատորիաները չեն գործում, համապատասխան գույքի

բացակայությամբ պայմանավորված,

- Դպրոցում առկա է համակարգչային սենյակ, ՆԶՊ կաբինետ, ճաշարան,
- Դպրոցի արհեստանոցը չի գործում, սարքավորումների բացակայությամբ պայմանավորված,
- Դպրոցը չունի մարզադահլիճ և բացօթյա խաղային հրապարակ,
- Դպրոցում կա հանդիսությունների դահլիճ,
- Դպրոցը գազաֆիկացված չէ, ջեռուցումն իրականացվում է վառելափայտով,
- Դպրոցում կա շուրջօրյա ջրամատակարարում և էլեկտրամատակարարում,
- Դպրոցում բացակայում է ապաստարանը,
- Դպրոցում կա գրադարան, որը կարիք ունի գրականությամբ համալրման։

Դպրոցն իր գործունեության իրականացնում է հետևյալ մարդկային ռեսուրսներով՝

- Տնօրեն,
- Մանկավարժներ և մանկավարժական հաստիքներ զբաղեցնող անձիք (ցանկը ներկայացված է մանկավարժական համակազմը բաժնում),
- Հաշվապահ,
- Պահակ երկու հոգի,
- Հավաքարար,
- Կառավարման խորհրդի անդամներ (ցանկը ներկայացված է կառավարման մարմինները բաժնում),
- Սովորողներ (կազմը ներկայացված է աշակերտական համակազմը բաժնում)
- Սովորողների ծնողներ, ծնողական խորհուրդ։

Դպրոցի գործունեությունը համապատասխանում է ենթակառուցվածքներին, որոնք ունեն որոշակի բարելավման կարիք, մարդկային ռեսուրսներին և ներուժին։

ՆՊԱՏԱԿ 1

Սովորողների ուսումնառության արդյունքների, կրթության որակի բարելավում, չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքների ապահովում:

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Արդի տեխնոլոգիաներով ուսուցման գործընթացի կազմակերպում:

2.Մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների զարգացում և ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացում:

Գործողություններ	Պատասխա-նատուներ	Ժամանա-կացույց	Ֆինանսական միջոցներ	Նյութատեխնիկական միջոցներ	Արդյունքների գնահատման չափանիշներ
Մանկավարժների համար ՏՀՏ գիտելիքների, նոր չափորոշիչների, կրթական նոր տեխնոլոգիաների կիրառման/զարգացմանն ուղղված վերապատրաստումների անցկացում	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող	2024-2029 թթ. յուրաքանչյուր ուսումնական տարում	Դպրոցի տարեկան բյուջե	Ուսումնական ծրագրեր, համակարգչային միջոցներ	1. Քանի ուսուցիչ է վերապատրաստվել տվյալ ուսումնական տարում 2. Վերապատրաստ-ված ուսուցիչների կողմից դասավանդվող առարկաներում կրթության որակի ինչ փոփոխություն է արձանագրվել
Սովորողներին նախապատրաստել մարզային	Տնօրեն	2024-2029 թթ. յուրաքանչյուր ուսումնական	Ֆինանսական միջոց չի պահանջվում	Թեստեր, խնդիրներ, վարժություններ, համակարգչային	1. Օլիմպիդաներին մասնակիցներ եղել են, թե ոչ, ինչ արդյունքներ

օլիմպիադաներին մասնակցության համար		տարում		տեխնիկա, ծրագրեր	են արձանագրվել
Սովորողների գիտելիքների գնահատման/ստուգման տարբեր գործիքների կիրառում	Տնօրեն	2024-2029 թթ. յուրաքանչյուր ուսումնական տարում	Ֆինանսական միջոց չի պահանջվում	Համակարգչային տեխնիկա, գնահատման սանդղակներ, բնութագրիչներ	1. Գիտելիքների գնահատման/ ստուգման ինչ գործիքներ են կիրառվել 2. Գիտելիքների գնահատման/ ստուգման կիրառված տարբեր գործիքները թույլ տալիս են հստակ բնորոշել սովորողների մոտ ձևավորված վերջնարդյունքները, և այդ գործիքների կիրառմամբստացվել է նույն պատկերը, թե առկա են հակասական եզրահանգումներ
Սովորողների ներգրավվում նրանց կարողությունների զարգացմանն ուղղված առցանց դասընթացներում	Տնօրեն	2024-2029 թթ. յուրաքանչյուր ուսումնական տարում	Դպրոցի տարեկան բյուջե	Ուսումնական նյութեր, ծրագրեր, համակարգչային տեխնիկա, վիդեո դասընթացներ	1. Քանի այդպիսի դասընթաց է կազմակերպվել 2. Դասընթացի արդյունքում սովորողի մոտ ինչ նոր հմտություններ են

					ձևավորվել և ինչ առաջընթաց է ապահովվել

Ռիսկեր	Ռիսկերը մեղմացնող գործողություններ
Սուղ ֆինանսական միջոցներ	Անվճար դասընթացների հայտնաբերում և մասնակցություն, առցանց դասընթացների բաժանորդագրություններ, խմբային վերապատրաստումների իրականացում
Սովորողների փոքր թիվ, սովորողների միջև մրցակցության պակաս, ուսման նկատմամբ հետաքրքրության բացակայություն	Յուրաքանչյուր սովորողի հետ անհատական աշխատանք, առանձին ծրագրերի կազմում, ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառում, սովորողների մոտ ուսման կարևորության գիտակցության ձևավորում
Մանկավարժների կողմից լրացուցիչ աշխատանք կատարելու ցանկության պակաս, գնահատման պարզ գործիքների կիրառում	Մանկավարժների հետ մեթոդական աշխատանքների իրականացում, ուսուցման կազմակերպում

<u>ՆՊԱՏԱԿ 2</u>

Համայնքի հետ համագործակցության սերտացում, ուսումնադաստիարակչական աշխատանքներում ծնողական համայնքի դերի կարևորում:

<u>ԽՆԴԻՐՆԵՐ</u>

1. Դպրոց-համայնք կապի/համագործակցության պահպանում և ակտիվացում:

2. Ծնողական համայնքի հետ տարվող աշխատանքների սահուն ընթացքի ապահովում և ավելացում։

Գործողություններ	Պատասխա-նատուներ	Ժամանա-կացույց	Ֆինանսական միջոցներ	Նյութատեխնիկական միջոցներ	Արդյունքների գնահատման չափանիշներ
Համայնքին մասնակից դարձնել դպրոցական կյանքին	Տնօրեն	2024-2029 թթ. յուրաքանչյուր ուսումնական տարում	Ֆինանսական միջոց չի պահանջվում	Համակարգչային տեխնիկա, միջոցառումների ծրագրեր, պաստառներ, հրավիրատոմսեր	1. Դպրոցի կողմից կազմակերպվող միջոցառումների որ մասին են մասնակցել համայնքի ներկայացուցիչները 2. Դպրոցի կողմից համայնքի բնակչության համար ինչ միջոցառումներ են կազմակերպվել
Օգտագործել համայնքի հնարավորությունները դպրոցի զարգացման, կրթության կազմակերպման որակի բարձրացման գործում	Տնօրեն	2024-2029 թթ. յուրաքանչյուր ուսումնական տարում	Համայնքի բյուջե	Պատվոգրեր, շնորհակալագրեր, դրամական, նյութական աջակցության միջոցներ	1. Համայնքի կողմից դպրոցին ինչ նյութական աջակցություններ, աշխատակազմին ինչ խրախուսումներ են տրամադրվել, 2. Համայնքի կողմից սովորողների համար ինչ սոցիալական ծրագրեր են իրականացվել

					3. Համայնքում բոլոր երեխաները կրթություն ստանում են, թե ոչ
Ավելացնել արտադպրոցական միջոցառումների թիվը, ծնողներին մասնակից դարձնել այդ գործընթացին	Տնօրեն, ԴԱԿ	2024-2029 թթ. յուրաքանչյուր ուսումնական տարում	Դպրոցի տարեկան բյուջե	Միջոցառումների ծրագրեր, տրանսպորտային միջոց,	1. Բոլոր ծնողներն են ներգրավված արտադպրոցական միջոցառումներին, թե ոչ 2. Սովորողների համար արտադպրոցական միջոցառումներին մասնակցության սոցիալական խոչընդոտներ կան, թե ոչ, այդպիսի խոչընդոտների հաղթահարման ինչ միջոցառումներ են իրականացվել
Ապահովել ծնող-ուսուցիչ մշտական կապը	Տնօրեն	2024-2029 թթ. յուրաքանչյուր ուսումնական տարում	Ֆինանսական միջոց չի պահանջվում	Առցանց հաղորդակցման տեխնիկական միջոցներ, հանդիպումներ, ժողովներ	1. Արդյոք բոլոր ծնողներն են տեղյակ յուրաքանչյուր առարկայի շրջանակներում իրենց երեխաների ցուցաբերած արդյունքներից 2. Ծնող-ուսուցիչ կապի

					համատեղ աշխատանքի արդյունքում ինչ բարելավումներ են արձանագրվել աշակերտի ուսման գործընթացում 3. Երկարօրյա ուսուցման կազմակերպման անհրաժեշտություն կա թե ոչ, եթե այո, ինչ քայլեր են ձեռնարկվել այդ ուղղությամբ

Ռիսկեր	Ռիսկերը մեղմացնող գործողություններ
Սովորողների թվի տարեց տարի նվազում, համայնքի ուշադրության պակաս դպրոցին	Բարձր որակի կրթության կազմակերպում և ապահովում, որպեսզի համայնքի բոլոր բնակիչներն իրենց երեխաների ուսուցումը կազմակերպեն այս դպրոցում
Գյուղից երիտասարդների մեծ արտահոսք, որը կարող է հանգեցնել դպրոցի փակման	Համայնքի հատ համատեղ համայնքի կարիքների գնահատում և երեխաների ճիշտ մասնագիտական կողմնորոշում, որը կնպաստի հետագայում համայնքում աշխատանք ունենալուն
Ծնողների ոչ հետևողական վերաբերմունք երեխաների կրթության գործընթացին	Ծնողների հետ ակտիվ աշխատանքների անցկացում, ուսուցչական կազմի կողմից համագործակցության նախաձեռնությունների ցուցաբերում

ՆՊԱՏԱԿ 3

Դպրոցում փոխօգնության, համագործակցային միջավայրի ստեղծում, սովորողների կրթական, սոցիալական շահերի պաշտպանության ապահովում:

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Դպրոցում բազմակարծության խրախուսում, մասնակցային միջավայրի ձևավորում:

2. Դպրոցում ներառական կրթության կազմակերպման պետական քաղաքականության իրականացում:

3.Դպրոցում բռնության, հալածանքի, օտարման դեմ պայքարի միջոցառումների անցկացում:

Գործողություններ	Պատասխա-նատուներ	Ժամանա-կացույց	Ֆինանսական միջոցներ	Նյութատեխնիկական միջոցներ	Արդյունքների գնահատման չափանիշներ
Մասնակցել կառավարման, մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների բոլոր նիստերին	Տնօրեն	2024-2029 թթ. յուրաքանչյուր ուսումնական տարում	Ֆինանսական միջոց չի պահանջվում	Նիստերի օրակարգեր, արձանագրություններ, որոշումներ, համակարգչային միջոցներ	1. Քանի նիստ է հրավիրվել տվյալ ուսումնական տարում և քանիսին է մասնակցել տնօրենը

Դպրոցում խրախուսել բազմակարծությունը, հաշվի առնել բոլոր առաջարկությունները	Տնօրեն	2024-2029 թթ. յուրաքանչյուր ուսումնական տարում	Ֆինանսական միջոց չի պահանջվում	Նյութատեխնիկական միջոցներ չեն պահանջվում	1. Ինչ առաջարկություններ են ներկայացվել, ում կողմից և ինչ ընթացք է ստացել 2. Սովորողներն ինչ մասնակցություն են ունեցել իրենց վերաբերյալ ընդունված որոշումների կայացմանը
Կրթության կազմակերպման գործընթացին ներառել կրթական գործընթացի բոլոր մասնակիցներին	Տնօրեն, խորհրդակցական մարմիններ ղեկավարներ, կառավարման խորհրդի նախագահ	2024-2029 թթ. յուրաքանչյուր ուսումնական տարում	Ֆինանսական միջոց չի պահանջվում	Առցանց հարթակներ, համակարգչային ծրագրեր, աշխատակարգեր	1. Կրթական գործընթացի մասնակիցների կողմից ինչ նախաձեռնություններ են ցուցաբերվել և ինչ ընթացք են ստացել 2. ԿԱՊԿՈՒ երեխաներ հայտնաբերվել են, թե ոչ, եթե այո, ապա ինչ միջոցառումներ են իրականացվել 3. Ինչ հարմարեցումներ են ստեղծվել ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության

					կազմակերպման համար և արդյոք դրանք բավարար են նրանց լիարժեք ուսուցումը կազմակերպելու համար
Իրականացնել միջոցառումներ ուղղված բռնության, օտարման, հալածանքի, ծխախոտի օգտագործման, թմրամոլության դեմ պայքարին	Տնօրեն, դասղեկներ, ԴԱԿ	2024-2029 թթ. յուրաքանչյուր ուսումնական տարում	Ֆինանսական միջոց չի պահանջվում	Միջոցառումների ծրագրեր, պաստառներ, վիդեո հոլովակներ, տեսանյութեր, համակարգիչ, պրոյեկտոր	1. Ինչ իրազեկման միջոցառումներ են իրականացվել և ինչ շրջանակի համար 2.բռնության, օտարման, հալածանքի, ծխախոտի օգտագործման դեպքեր արձանագրվել են, թե ոչ 3. Սովորողների կողմից միմյանց նկատմամբ ինչպիսի վերաբերմունք է առկա 4. Դպրոցում պետական համապատասխան մարմինների հետ առկա է համագործակցություն, թե ոչ, համագործակցության արդյունքում կան կանխարգելված

					դեպքեր, թե ոչ 5. Կազմակերպված միջոցառումների սովորողների մասնակցության ձևերը՝ որպես ունկնդիր, որպես զեկուցող, որպես ինքնուրույն աշխատանք կատարող, 6. Անձնակազմի կողմից թույլ տրված բացթողումներ, սխալներ
Կազմակերպել սպորտային, մշակութային միջոցառումներ, դրանցում ընդգրկել և աշխատակազմին և սովորողներին	Տնօրեն, ԴԱԿ	2024-2029 թթ. յուրաքանչյուր ուսումնական տարում	Ֆինանսական միջոց չի պահանջվում	Սպորտային պարագաներ, սպորտային հրապարակ, մշակութային միջոցառումների ծրագրեր	1. Քանի միջոցառում է կազմակերպվել ուսումնական տարվա ընթացքում 2. Բոլոր սովորողները ներգրավված են եղել այդ միջոցառումներին, թե ոչ, 3. Աշխատակազմի մասնակցության ձևերը այդ միջոցառումներին

Ռիսկեր	Ռիսկերը մեղմացնող գործոններ
Ներկայացված առաջարկությունների չկարևորում, որոշումների միանձնյա ընդունում	Տնօրենի կողմից կառավարման հստակ սկզբունքների սահմանում, որոշումների կայացման, առաջարկությունների քննարկման ըստ կանոնակարգերի մշակում և կիրառում
Երեխաների կողմից վատ սովորությունների արագ ընդունում և կիրառում	Աշակերտների փոքր թիվը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր աշակերտին պահել ուշադրության կենտրոնում
Միջոցառումների կազմակերպման համար շահագրգիռ կողմերի նախաձեռնությունների պակաս, խորհրդակցական մարմինների ոչ արդյունավետ աշխատանք	Դպրոցի անձնակազմի կողմից ծնողական, աշակերտական խորհուրդներին աջակցությունների տրամադրում, համատեղ աշխատանքների կազմակերպում

ՆՊԱՏԱԿ 4

Դպրոցի ֆիզիկական միջավայրի առկա պայմանների բարելավում:

ԽՆԴԻՐ

1. Վարչատնտեսական մասի համակարգողին լիազորությունների շրջանակում դպրոցի ֆիզիկական միջավայրի բարելավմանն ուղղված աջակցության ցուցաբերում:

Գործողություններ	**Պատասխա-նատուներ**	**Ժամանա-կացույց**	**Ֆինանսական միջոցներ**	**Նյութատեխնիկական միջոցներ**	**Արդյունքների գնահատման չափանիշներ**
Դպրոցի կարիքների վերաբերյալ համակարգողին ներկայացնել առաջարկություններ	Տնօրեն	2024-2029 թթ. յուրաքանչյուր ուսումնական տարում	Ֆինանսական միջոց չի պահանջվում	Համակարգիչ, հաշվետվություններ, գրություններ	1. Ինչ առաջարկութ-յուններ են ներկայացվել 2.Ինչ կարիքներ են բավարարվել տվյալ տարում

Ռիսկեր	**Ռիսկերը մեղմացնող գործողություններ**
Վարչատնտեսական մասի համակարգողի կողմից ներկայացված ծրագրերի ոչ ամբողջական իրականացում	Առաջարկությունները դասակարգել ըստ առաջնահերթությունների և առաջարկել դրանց լուծումներն ըստ հերթականության

ՆՊԱՏԱԿ 5

Աշխատակազմի մոտիվացիայի և աշխատունակության բարձրացում։

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Աշխատակազմի պարբերաբար խրախուսում և արժևորում, թիմային միջավայրի ստեղծում։

2. Աշխատակազմի ինքնակրթության արդյունավետ կազմակերպմանը և մասնագիտական զարգացմանն աջակցում։

Գործողություններ	Պատասխա-նատուներ	Ժամանա-կացույց	Ֆինանսական միջոցներ	Նյութատեխնիկական միջոցներ	Արդյունքների գնահատման չափանիշներ
Անձնակազմի հետ հաճախակի կազմակերպել հանդիպումներ, կլոր սեղան քննարկումներ, արժևորել ձեռքբերումները	Տնօրեն	2024-2029 թթ. յուրաքանչյուր ուսումնական տարում	Ֆինանսական միջոց չի պահանջվում	Պատվոգրեր, շնորհակալագրեր, հանդիպումների օրակարգեր, քննարկման թեմաներ, համակարգիչներ	1. Քանի հանդիպում է կազմակերպվել, և ինչ մասնակցություն է ապահովվել 2.Ինչ ձեռքբերումներ են արձանագրվել մանկավարժների կողմից, նոր որակավորումներ, մասնագիտական հմտություններ և այլն 3. Տվյալ տարում քանի հոգի է խրախուսվել և խրախուսման ինչ տեսակներ են կիրառվել

					4. Ֆինանսական խրախուսում կիրառվել է. թե ոչ, եթե այո, ապա քանի հոգի է ընդգրկված եղել
Աշխատակազմի մոտ ձևավորել թիմային աշխատանքի, միասնականության միջավայր, ապահովել խրախուսման թափանցիկ համակարգի կիրառություն	Տնօրեն	2024-2029 թթ.	Ֆինանսական միջոց չի պահանջվում	Հրաման, կանոնակարգ	1. Ովքեր կարող են ներկայացնել խրախուսման առաջարկություններ 2. Ներկայացված առաջարկություններն ինչ կարգով են քննարկվում և ինչպես են կայացվում որոշումները 3. Ներկայացված առաջարկություններն ընդունվել են, թե ոչ
Աշխատակազմի համար պարբերաբար կազմակերպել վերապատրաստումների դասընթացներ, առանձին թեմաներով	Տնօրեն	2024-2029 թթ. յուրաքանչյուր ուսումնական տարում	Դպրոցի տարեկան բյուջե	Ուսուցման նյութեր, վերապատրաստման ծրագրեր, հետազոտական ծրագրեր, համակարգիչ	1. Վերապատրաս-տումների ինչ դասընթացներ են կազմակերպվել, որքան է կազմել մասնակցությունը

հետազոտական աշխատանքներ և քննարկել ընդհանուր ժողովներում					2. Հետազոտական աշխատանքներ իրականացվել են, թե ոչ, իրականացվել է խմբով, թե միանձնյա, քանի աշխատանք է իրականացվել

Ռիսկեր	**Ռիսկերը մեղմացնող գործողություններ**
Անձնակազմի ինքնակրթությամբ զբաղվելու մոտիվացիայի պակաս	Այս ուղղությամբ իրականացվում են նաև պետական աջակցության ծրագրեր, որոնք թույլ են տալիս ատեստավորված մանկավարժներին ունենալ վարձատրության ավելացում
Անձնակազմի խրախուսման նպատակով սուղ ֆինանսական միջոցներ	Առկա ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում
Ինքնակրթությամբ զբաղվելու համար անհրաժեշտ միջոցների բացակայություն, մանկավարժների ծերացում և նոր մանկավարժների ներգրավվման բարդություններ	Կրթական տարբեր կազմակերպությունների հետ համագործակցությունների ձևավորում, մենթոր ուսուցիչների ներգրավվում

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Սույն զարգացման ծրագրով յուրաքանչյուր գործողության համար սահմանվել են արդյունքների գնահատման չափանիշներ, որոնց կիրառմամբ ստեղծվում է բավարար հնարավորություն գնահատելու համար, թե որքանով են ապահովվել սահմանված խնդիրների լուծումը և նպատակների կատարումը:

Ծրագրի կատարման նկատմամբ տարեկան վերահսկողությունն իրականացնելու է կառավարման խորհուրդը, որը յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո պետք է եզրակացություն տա ծրագրի կատարմանը:

Զարգացման ծրագրի իրականացման նկատմամբ բացի խորհրդի կողմից սահմանվող արտաքին վերահսկողության, պետք է սահմանել նաև ներդպրոցական վերահսկողության հստակ մեխանիզմներ, որը թույլ կտա ցանկացած ժամանակ գնահատել կատարման ընթացքը, հայտնաբերել տվյալ պահին առկա շեղումները և ընդունել համապատասխան որոշումներ միջոցառումների վերաձևակերպման անհրաժեշտության մասին: Սա կարելի է իրականացնել միայն հստակ ունենալով յուրաքանչյուր միջոցառման իրականացման գործողությունների պլանը, որտեղ հստակեցված կլինի իրականացման ժամկետները և սահմանված կլինեն կոնկրետ պատասխանատուներ, ովքեր էլ ըստ տվյալ գործողության իրականացման փուլերի կապահովվեն հաշվետվությունների ներկայացումը, որոնց վերլուծության արդյունքում կարող է ձևավորվել ընդհանրացված պատկեր զարգացման ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ:

Հաշվետվությունների կոնսոլիդացմամբ էլ կձևավորվի կառավարման խորհրդին ներկայացվող տարեկան հաշվետվությունը: Չնայած կառավարման խորհրդին հաշվետվության ներկայացումը նախատեսված է տարեկան պարբերականությամբ, այնուամենայնիվ յուրաքանչյուր կիսամյակի ամփոփումից հետո, նախատեսում եմ կառավարման խորհրդի առաջիկա նիստում կառավարման խորհրդին ներկայացնել համառոտ տեղեկանք կատարման ընթացքի և տվյալ տարվա համար պլանավորված գործողությունների ժամանակացույցերում փոփոխությունների անհրաժեշտության կամ դրանց բացակայության վերաբերյալ:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Կառավարման խորհրդին ներկայացվող հաշվետվության ձևաչափը սահմանված է գործադիր մարմնի կողմից, սակայն կարիք կա այդ հաշվետվությանը լրացուցիչ կցել համապատասխան հիմնավորումներ, տեղեկանքներ, որոնք կներկայացվեն առդիր։

Քանի որ յուրաքանչյուր տարվա համար գործողությունները պլանավորվելու են ելնելով տվյալ ժամանակաշրջանի առանձնահատկություններից, ուստի զարգացման ծրագրի կատարման հաշվետվությունը կներկայացնենք օրինակի տեսքով։ Հաշվետվությունը ներկայացվելու է ուսումնական տարվա ավարտից հետո մինչև հաջորդ ուսումնական տարվա սկիզբը։ Դպրոցում կկազմվեն ընթացիկ հաշվետվություններ առանձին պատասխանատուների կողմից, որի պարբերականությունը կորոշվի ծրագրված միջոցառումների առանձնահատկություններից։

Հ/Հ	Գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում գործողության չկատարման կամ մասնակի կատարմանպատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ
1	Աշխատակազմի համար կազմակերպել նոր չափորոշչի կիրառման գործիքակազմերի ուսուցման դասընթաց	Մանկավարժների մասնագիտական որակների բարձրացում	2024 թ. հոկտեմբեր ամսի 3-րդ շաբաթում	Կազմակերպվել է դասընթաց ԿԶՆԱԿ հիմնադրամի հետ համատեղ, որին մասնակցել է 7 ուսուցիչ	Կատարվել է	Փոփոխության անհրաժեշտություն չկա

2	Մասնակցել կառավարման խորհրդի նիստերին	Կառավարման խորհրդի աշխատանքներին աջակցում, նրա դերի բարձրացում	Յուրաքանչյուր եռամսյակ, նաև արտահերթ նիստերին	Մասնակցել եմ հրավիրված բոլոր 5 նիստերին, ներկայացրել եմ քննարկման 7 հարց, որոնք ընդունվել են	Կատարվել է	Փոփոխության անհրաժեշտություն չկա
3	Համայնքի օժանդակությամբ կազմակերպել էքսկուրսիա բոլոր սովորողների և ծնողների մասնակցությամբ	Ծնող-դպրոց-համայնք կապի ամրապնդում	2025 թ. մայիս ամսվա 1-ին շաբաթ	Էքսկուրսիան չի կայացել	Վատ եղանակային պայմաններ	Իրականացնել օգոստոս ամսի 2-րդ շաբաթում
4	Սովորողներին նախապատրաստել մարզային օլիմպիադաներին մասնակցության	Կրթության որակի բարձրացում	2025 թ. հունվար-փետրվար ամիսներ	Օլիմպիադաներին մասնակցել է 1 սովորող աշխարհագրություն առարկայից, մրցանակային տեղ չի զբաղեցրել	Կատարվել է	Շարունակել աշխատանքներն այս ուղղությամբ